ConverseBank
Բոլորի համար

«30» 04 2013

№ ______

## Կոնվերս բանկ ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը

Մենք պատասխանատու ենք բանկի ֆինանսական վիճակը արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար: Այսպիսով բանկի ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար:

Բանկում գործում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգ:

Բանկում գործում է, բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգ:


«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյան փող., 26/1, Հեռ.՝ ( +374 10) 511200, 511211, Ֆաքս՝ (+374 10) 511212

Converse Bank CJSC
26/1, Vazgen Sargsyan Str., Republic Square, Yerevan 0010, RA
Tel.: (+374 10) 511200, 511211, Fax: (+374 10) 511212

www.conversebank.am

Բանկում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:

Գործադիր տնօրեն Տիգրան Դավթյան

Գլխավոր հաշվապահ Գոհար Հարությունյան

ConverseBank
Բոլորի համար

«30» 04 2013

№ 993/1.9

<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ խորհրդի հավաստիացում

<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Խորհրդի նախագահ՝ Արմեն Տեր-Տաճատյան

2777

«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյան փող. 26/1, Հեռ.՝ (+374 10) 511200, 511211, Ֆաքս՝ (+374 10) 511212

Converse Bank CJSC
26/1, Vazgen Sargsyan Str., Republic Square, Yerevan 0010, RA

«30» 04 2013

№ 991/1.9

**Բանկի տարեկան Ֆինանսական հաշվետվությանը կից ֆինանսական վերլուծություն**

<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ-ի ղեկավարությունը ներկայացնում է Բանկի 2012թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

2012 թվականի ընթացքում <<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ-ն, ընդլայնելով հաճախորդների բազան և մատուցվող ֆինանսական ծառայությունների շրջանակը, պահպանել է իր ծանրակշիռ դիրքերը ՀՀ բանկային համակարգում:

2012 թվականին Բանկին հաջողվեց պահպանել նախորդ տարիներին արձանագրված ակտիվների և պարտավորությունների աճը: Տարեվերջին Բանկի ընդհանուր ակտիվները կազմեցին 115.8 մլրդ դրամ:

Վարկային ներդրումներն աճեցին 29.3%-ով և կազմեցին 59.7 մլրդ դրամ: Տարվա ընթացքում միջոցառումներ ձեռնարկվեցին նոր վարկառուների ներգրավման և գործող վարկերի արդյունավետ մոնիտորինգի ուղղությամբ, ինչի շնորհիվ էլ հնարավոր եղավ էականորեն մեծացնել Բանկի վարկային պորտֆելը:

Տարեվերջին Բանկի պարտավորությունները կազմեցին 99.1 մլրդ դրամ: Արձանագրվեց հաճախորդների նկատմամբ պարտավորությունների անկում 18.1%-ային կետով, որը սակայն պայմանավորված էր նախորդ տարվա աննախադեպ՝ 75.1% աճով: Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները կազմեցին ընդհանուր պարտավորությունների 84.6%-ը: Վերջինս արդյունքն է մատուցվող որակյալ ծառայությունների և վարվող ճկուն սակագնային քաղաքականության:

2012թ-ին Բանկի տարեկան զուտ շահույթը կազմեց 324.3 մլն դրամ, իսկ համապարփակ ֆինանսական արդյունքը ներառյալ՝ 545.4 մլն. ՀՀ դրամ:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 16.8 մլրդ դրամ՝ աճելով 1.8%-ով:

«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 0010, ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան փող., 26/1, հեռ.՝ (+374 10) 511200, 511211, Ֆաքս՝ (+374 10) 511212

Converse Bank CJSC
26/1, Vazgen Sargsyan Str., Republic Square, Yerevan 0010, RA
Tel.: (+374 10) 511200, 511211, Fax: (+374 10) 511212
www.conversebank.am

Գործունեություն իրականացնելով ներքին և արտաքին շուկաներում՝ Բանկը չի կարող զերծ մնալ հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձություններից: Բանկի կողմից շարունակաբար մշակվում և կատարելագործվում են միջոցառումների ցանկն՝ ուղղված թե ներքին, թե արտաքին մարտահրավերներին:

Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերի, նրանց գնահատման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ռիսկերի կառավարման Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը բացահայտված է սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող <<Ռիսկի կառավարում>> թիվ 36 ծանոթագրությունում:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունն որդեգրել են Բանկի գործունեության արդիականացման և ընդլայման ուղին: Նպատակ ունենալով հասանելի լինել հաճախորդների հնարավորինս լայն շերտերին՝ ծրագրվում է առաջիկա տարիներին մեծացնել մասնաճյուղերի ցանցը, կանխիկացման և սպասարկման կետերի քանակը, մատուցվող ծառայությունների ցանկը:

Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյան

Խորհրդի անդամ Ջուան Պաբլո Գեչիդջյան

Խորհրդի անդամ Արսեն Գամաղելյան

Հաստատված է

"Կոնվերս Բանկ" ՓԲԸ

Խորհրդի 23.04.13թ. որոշմամբ

/N 6 արձանագրություն 20-րդ հարց/

Խորհրդի նախագահ

Արմեն Տեր-Տաճատյան

**Եզրակացություն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների համապատասխանության վերաբերյալ**

Սույն եզրակացությունը կազմված է Կոնվերս Բանկ ՓԲԸ-ի Ներքին աուդիտի կողմից 2012թ.-ի ընթացքում իրականացրած տարեկան ծրագրով սահմանված ստուգումների և ընթացիկ հսկողության արդյունքների վրա:

Մեր կարծիքով Կոնվերս Բանկ ՓԲԸ ներքին հսկողության համակարգը, 2012թ.-ի ընթացքում, հիմնականում, համապատասխանել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Լիլիթ Յորդանյան

Ներքին աուդիտի ղեկավար